Կատակ-խնդիրներ

1. 50 մուկ 50 օրում ուտում են 50կգ ցորեն: Քանի՞ կգ ցորեն կուտեն 10 մուկր 10 օրում:

2.10 կատու 10 օրում ուտում են 10 մուկ: Քանի՞ կատու 30 օրում կուտեն 30 մուկ:

3.Ո՞րն է ավելի ծանր՝ 2 կգ երկաթը, թե՞ 2 կգ բամբակը:

4.Վանդակում կա 3 ճագար: Ինչպե՞ս ճագարները բաժանել երեք ընկերների միջև, որ նրանցից յուրաքանչյուրը ստանա մեկ ճագար և մեկն էլ մնա վանդակում:

5.Գնորդը հավ գնելու համար վճարեց 1200 դրամ և էլի կես հավ: Ի՞նչ արժեր հավը:

6.Մեկ ոտքի վրա կանգնած աքլորը կշռում է 2 կգ: Քանի՞ կգ կկշռի աքլորը, եթե կանգնի 2 ոտքի վրա:

7.Արամն ու Գեղամն ապրում են միևնույն շենքի, համապատասխանաբար, 2-րդ և 6-րդ հարկերում: Իրենց հարկերը բարձրանալիս Գեղամը քանի՞ անգամ է ավել շատ ճանապարհ անցնում, քան Արամը(հաշշվում է առաջին հարկից:

8. Ձիերի եռյակն անցավ 24կմ: Քանի՞ կմ անցավ յուրաքանչյուր ձին:

9. Իմ ձախ կողմի գրպանում այնքան դրամ էր, որքան՝ աջ գրպանում: Եթե ձախ գրպանից 100 դրամանոց մետաղադրամը տեղափոխեցի աջ գրպանս: Դրանից հետո աջ գրպանում քանի՞ դրամ ավել եղավ, քան ձախ գրպանում:

10.Վառվում էր 10 մոմ: Դրանցից երեքը հանգցրին: Քանի՞սը մնաց: